



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ**  
**ՎԱՅՔ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ**

21/12/2022

ք. Վայք

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12**  
**ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ**

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 9 անդամներ:

Բացակա էին՝ Թարո Ավետյանը, Սոնա Կարապետյանը, Աստղիկ Հակոբյանը, Կառլեն Մինասյանը, Եվա Մովսիսյանը, Համբարձում Զանոյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝**

**Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Մխիթար Մաթեվոսյանը**

**Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Անուշ Ղազարյանը**

Լսեցին

**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով.

1. Վայք համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 21-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Վայք համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման մրցութային հանձնաժողով ստեղծելու և Վայք համայնքի ավագանու 2021 թվականի սեպտեմբերի 7-ի թիվ 41-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին /զեկուցող՝ Ա. Ղազարյան/ :
3. Վայք համայնքի Ազատեն բնակավայրում գտնվող 0.12037 հա մակերեսով

- հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին /զեկուցող՝ Ռ.Մկրտչյան/:
- 4.Վայք համայնքի Ջառիթափ բնակավայրում գտնվող 0.03194 հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին /զեկուցող՝ Ռ.Մկրտչյան/:
- 5.Վայք համայնքի Փոռ բնակավայրում գտնվող 0.02318 հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին /զեկուցող՝ Ռ.Մկրտչյան/:
6. Վայք համայնքում աղբահանության իրականացման կարգը և սանիտարական մաքրման սխեման հաստատելու, աղբահանության վճարների դրույքաչափերն ու կիրառվող արտոնությունները սահմանելու և Վայք համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 9-ի N 29-Ն որոշումն ուժը կորցած ճանաչելու մասին /զեկուցող՝ Վ.Ավետյան/:
7. «Նորավանք Սպորտային Ակումբ» ՍՊԸ-ի և համայնքի միջև 28.07.2020 թվականին կնքված «Անշարժ գույքի անհատույց օգտագործման» պայմանագիրը լուծելու մասին /զեկուցող՝ Հ.Ջաքարյան/:
- 8.Վայք համայնքի Գոմք բնակավայրում գտնվող առանց սեփականատիրոջ մնացած հողատեսքերը համայնքային սեփականություն ճանաչելու և կադաստրային քարտեզում ուղղում կատարելու մասին /զեկուցող՝ Ռ.Մկրտչյան/:
9. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի վարչական տարածքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգը սահմանելու մասին /զեկուցող՝ Ա.Հովսեփյան/:
- 10.Վայք համայնքի 2022 թվականի բյուջեի ծրագրային և ծախսերի տնտեսագիտական հողվածների միջև վերաբաշխում կատարելու մասին /զեկուցող՝ Ա.Հովսեփյան/:
11. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանելու մասին:
- 12.Վայք համայնքի Վայք քաղաքի փողոցների մայթեզրերին գտնվող, փողոցային լուսավորությանը և հոսանքալարերին խանգարող ծառերի ճյուղերը հատելուն թույլտվություն տալու մասին:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 120-Ա/

Լսեցին

**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ  
 ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ/ԿԱՄ/ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ  
 ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԿԱՋՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ  
 ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՋՄԻՑ  
 ԱՃՈՒՐԴԱՎԱՐ և ԱՐՁԱՆԱԳՐՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ  
 ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 7-Ի ԹԻՎ 41-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ  
 ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ:**

**/Ջեկ. ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ/**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝

1. Վայք համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման համար ստեղծել մրցութային հանձնաժողով հետևյալ կազմով.

- հանձնաժողովի նախագահ-Հայկ Ավագյան-համայնքի ղեկավարի առաջին տեղակալ
  - հանձնաժողովի անդամ-Անուշ Ղազարյան-աշխատակազմի քարտուղար
  - հանձնաժողովի անդամ-Արամ Հովսեփյան-աշխատակազմի ֆին. բաժնի պետ
  - հանձնաժողովի անդամ-Ռոման Մկրտչյան-աշխատակազմի գլխ. մասնագետ
  - հանձնաժողովի անդամ-Վարդան Կոստանյան-ավագանու անդամ
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հանձնաժողովից աճուրդավար նշանակել հանձնաժողովի նախագահ Հայկ Ավագյանին, արձանագրող նշանակել աշխատակազմի քարտուղար Անուշ Ղազարյանին:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 121-Ա/

Լսեցին

**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԶԱՏԵԿ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.12037 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ  
ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Ձեկ. ՌՈՄԱՆ ՄԿՐՏՅԱՆ/**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունիսի 17-ի «Գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրման դեպքերը սահմանելու մասին» N 987-Ն որոշման 9-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին ենթակետին, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14.3-րդ հոդվածի 9-րդ մասին.

1. Վայք համայնքի սեփականություն հանդիսացող, Ազատեկ բնակավայրում գտնվող 0,12037 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության նշանակության հողամասի (հողատեսքը՝ \_\_\_\_\_ գյուղ. այլ) նպատակային նշանակությունը փոխել որպես \_\_\_\_\_ բնակավայրերի (գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատում) նպատակային նշանակության հողերի:

2. Վայք համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 122-Ա/

Լսեցին

**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՌԻԹԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,03194 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ՌՈՄԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ/**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունիսի 17-ի «Գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրման դեպքերը սահմանելու մասին» N 987-Ն որոշման 9-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին ենթակետին, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14.3-րդ հոդվածի 9-րդ մասին.

1. Վայք համայնքի սեփականություն հանդիսացող, Զառիթափ բնակավայրում գտնվող 0,03194 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության նշանակության հողամասի (հողատեսքը՝ արոտ) նպատակային նշանակությունը փոխել որպես բնակավայրերի (գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատում) նպատակային նշանակության հողերի:
2. Վայք համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 123-Ա/

Լսեցին

**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՒ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.02318 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ՌՈՄԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ/**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունիսի 17-ի «Գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրման դեպքերը սահմանելու մասին» N 987-Ն որոշման 9-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման

մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին ենթակետին, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14.3-րդ հոդվածի 9-րդ մասին.

1. Վայք համայնքի սեփականություն հանդիսացող, Փոռ բնակավայրում գտնվող 0,02318 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության նշանակության հողամասի (հողատեսքը՝ արոտ) նպատակային նշանակությունը փոխել որպես բնակավայրերի (գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատում) նպատակային նշանակության հողերի:
2. Վայք համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 124-Ս/

Լսեցին

**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՄԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐՆ ՈՒ ԿԻՐԱՌՎՈՂ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 9-Ի N 29-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Ձեկ. ՎԱՐԴԱՆ ԱՎԵՏՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, 88-րդ հոդվածով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ, 8-րդ հոդվածի 7-րդ, 10-րդ հոդվածի 4-րդ և 13-րդ հոդվածի 2-րդ մասերով, «Տեղական տուրքերի և վճարների մասին օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի և 14-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 8-րդ կետերով, «Թափոնների մասին» օրենքի 11-րդ հոդվածով, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով.

1. Ընդունելի զիտություն, որ

- 1) Վայք համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները կազմակերպում և իրականացնում է «Վայքի բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն)՝ իր կանոնադրական լիազորությունների շրջանակներում և սույն որոշմամբ սահմանված նորմերին ու պայմաններին համապատասխան:

- 2) աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները ֆինանսավորվում են Վայք համայնքի բյուջեից՝ առանձին ծախսային հոդվածով:
2. Սահմանել Վայք համայնքում աղբահանության դիմաց գանձվող տեղական վճարների դրույքաչափերը և կիրառվող արտոնությունները՝ համաձայն հավելված 1-ի:
3. Սահմանել շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման համար Վայք համայնքի ղեկավարի կողմից տրամադրվող թույլտվության համար գանձվող տեղական վճարի դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի:
4. Սահմանել Վայք համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման և գանձման կարգը՝ համաձայն հավելված 3-ի:
5. Հաստատել Վայք համայնքում աղբահանության իրականացման կարգը՝ համաձայն հավելված 4-ի:
6. Հաստատել աղբի հավաքման և փոխադրման համար Վայք համայնքի ղեկավարի կողմից թույլտվության տրամադրման պայմաններն ու կարգը՝ համաձայն հավելված 5-ի:
7. Հաստատել Վայք համայնքի տարածքի աղբահանության և սանիտարական մաքրման սխեման՝ համաձայն հավելված 6-ի:
8. Ուժը կորցրած ճանաչել Վայք համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 9-ի «Աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման կարգը, աղբահանության սխեման հաստատելու մասին» N 29-Ն որոշումը:
9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 125-Ն/

Լսեցին

**«ՆՈՐԱՎԱՆՔ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ» ՍՊԸ-Ի ԵՎ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋԵՎ  
28.07.2020 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՆՔՎԱԾ «ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ  
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ» ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Ձեկ. ՀՈՎՍԵՓ ԶԱՔԱՐՅԱՆ/**

Հաշվի առնելով «Նորավանք Սպորտային Ակումբ» ՍՊԸ-ի կողմից լիազորված անձ Ա.Համբարձումյանի դիմումը, Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, և 2020 թվականի հուլիսի 28-ին կնքված «Անշարժ գույքի անհատույց օգտագործման մասին» պայմանագրի 6.2 կետով.

1. Լուծել «Նորավանք Սպորտային Ակումբ» ՍՊԸ-ի և համայնքի միջև 28.07.2020 թվականին կնքված «Անշարժ գույքի անհատույց օգտագործման» պայմանագիրը:

2. Համայնքի ղեկավարին՝ օրենքով սահմանված կարգով ձեռնարկել գույքագրման և ընդունման-հանձնման աշխատանքներ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 126-Ա/

Լսեցին

**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՄՔ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՌԱՆՑ  
ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ՄՆԱՅԱԾ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ  
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՂՈՒՄ ՈՒՂՂՈՒՄ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ՌՈՄԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 01.06.2010թ. «Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը» հաստատելու մասին» N 186-Ն հրամանով հաստատված հրահանգի 9-րդ կետի 2-րդ և 5-րդ ենթակետերով.

1. Վայք համայնքի Գոմք բնակավայրում գտնվող և համայնքի կադաստրային քարտեզում որպես «անհայտ» քաղաքացու սեփականություն հաշվառված և իրավունք հաստատող որևէ փաստաթուղթ չունեցող 5.096 հա ընդհանուր մակերես ունեցող 48 միավոր հողատեսքերը ճանաչել որպես Վայք համայնքի սեփականություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 127-Ա/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ «ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ»  
ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ  
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ԱՐԱՄ ՀՈՎՍԵՓՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-4-րդ կետի և «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 4.1-րդ, 4.2-րդ, 6-րդ, 8-12-րդ, 17-րդ, 20-րդ կետերի դրույթներով՝

1. Սահմանել ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի վարչական տարածքում «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 128-Ն/

Լսեցին

**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Ջեյ. ԱՐԱՄ ՀՈՎՍԵՓՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով.

1. Թույլատրել բյուջետային ծախսերում կատարել 7 500 000 /յոթ միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով նվազեցումներ՝

1.1 Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 11 բաժնի 1-ին խմբի 2-րդ դասի տնտեսագիտական դասակարգման 4891 «-Պահուստային միջոցներ» հոդվածի տարեկան գումարը նվազեցնել 7 500 000 /յոթ միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամով՝ սահմանելով 1 300 000 /մեկ միլիոն երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ 97 500 000 /իննսունյոթ միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

2. Բյուջետային ծախսերում կատարել 7 500 000 /յոթ միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով ավելացումներ՝

2.1 Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 05 բաժնի 1 խմբի 1 դասի տնտեսագիտական դասակարգման 4637 «-Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածի տարեկան գումարը ավելացնել 7 500 000 /յոթ միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամով՝ սահմանելով 97 500 000 /իննսունյոթ միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:



Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 129-Ն/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱՎԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով՝

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2023 թվականի փետրվարի 14-ին, ժամը՝ 15:00-ին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 130-Ա/

Լսեցին

**ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՄԱՅԹԵԶՐԵՐԻՆ ԳՏՆՎՈՂ, ՓՈՂՈՑԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՀՈՍԱՆՔԱԼԱՐԵՐԻՆ ԽԱՆԳԱՐՈՂ ԾԱՌԵՐԻ ԾՅՈՒՂԵՐԸ ՀԱՏԵԼՈՒՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին 20-րդ կետով.

1. Թույլատրել «Վայք համայնքի բարեկարգում» ՀՈԱԿ-ին Վայք քաղաքի Երիտասարդական փողոցում գտնվող, փողոցային լուսավորությանը և հոսանքալարերին խանգարող ծառերի ճյուղերը կտրել:
2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել «Վայք համայնքի բարեկարգում» ՀՈԱԿ-ի վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 131-Ա/

Ավագանու անդամներ

ՇՈՒՇԱՆԻԿ ԱՍԼԱՆՅԱՆ

ՀԱՅԿ ԱՎԱԳՅԱՆ

ԱՆՈՒՇ ԱՐԱՄՅԱՆ

ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ

ԱՐՏԱՎԱԶԴ ԽԱԶԱՏՐՅԱՆ

ՍՈՒՍԱՆՆԱ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀՐԱԶԻԿ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ



Նիստին արձանագրեց՝ Անուշ Ղազարյանը